

Բա՛ց դեմքդ, փոյր, ինչպէս գարնան առաւել.
Այսօր տօն է, եւ հարսանիք է կարմիր.
Օծէ աչքերդ մանուշակով փաղցրահոտ
Եւ հայրենի գեղեցկութիւնդ ըզգեցիր:

Պիտի անցնինք հորիզոնէ հորիզոն
Հին օրերու քափօրի պէս փրմական,
Պիտի հիւսեմք աստուածային նոր գեղօն.
Խնկարկելով տենչերը մեր պատարագ:

Մօտեցի՛ր, փոյր, եւ դուն եղբայր Վրէժի,
Մասիններու կոյս կատարին եմք հիմա.
Հոն ծիածանն է դրօշակ հայրենի
Որ անըստուեր արեւուն հետ կը խաղայ:

Հոն չեն ցօղեր աստղերն արցունք մշտնջեան,
Լոյսին մէջ լոյս, լոյսն է լոյսին պարունակ
Հոն աղանին, Աստուծոյ ձեռքը վրբան,
Կը քեւածէ խաղաղութեան հրեշտակ:

Բա՛ց քեւերդ փոյր, մեր օրերու պարունի,
Եւ դուն եղբայր, կապէ գեմքերդ փառքի.
Այսօր տօն է, կարմիր խնոյք հարսնիքի,
Յարութեան սուրբ պատարագն է հաւատքի:

Մեր հողն է սուրբ՝ դարձեալ խորան երկնային,
Արեւն է ջահ, երգն է բամբիւ վաղեմի.
Հոս չի մեռնիր, այլ կը ծընի վերքստին
Հայու հոգին, հուր դառնալով աւելի:

Այգիներէն կ'ուռնանայ նոր որթատունկ,
Կակաչներն են լի բաժակներ բիրեղեղայ,
Այսօր տօն է եւ Հայութեան սուրբ կրնունք,
Մեարայ Մաշքոց՝ մեր ուխտն օրհնող փահանայ:

Ո՛րքան բերկրանք եւ մարգարիտ կը շողան,
Մեր հանդերու հասկերուն մէջը ծոցուոր,
Երդիւքներէն ծուխերն երգով կը ցնծան,
Նոր արեւու շողերուն հետ մեղրածոր:

Պըսակուէ՛, փոյր, այսօր տօն է մեզ համար,
Վարդը վարդին համբոյր կու տայ, կը ժպտի.
Սոխակներուն երգն աւելի սիրավատ,
Մեր տենչերուն բոցուտ սրտի գոյնն ունի:

Ջարդարուէ՛, փոյր, արտերուն պէս ցորենուտ,
Հագար մանեակ անցուր վրդիդ կարապի.
Դիր սուրբ հինայ ոսկեծրդի մատներուդ,
Եղիւր կրկին Արմենուհի սիրելի:

Ահա կու գան Նահատակներ շար ի շար,
Նարօտ կապած ծիածանի գոյներով.
Ահա կու գան բազուկներով ջահավատ,
Երկու մեղքած ակեղծուած կարմիր ծով:

Վաղորդուէ՛, փոյր, կոյսերուն հետ նահատակ,
Եւ ես տեսնեմ հեգանքերուն պարը ձեր.
Թիզ պարն ըլլայ նոր Վրէժի յաղթանակ,
Վախումն համար՝ հայրենի սուրբ հրբաւեր:

Վահագնի, 24 Ապրիլ, 1965

ՎԱՆԱՏՈՒՐ

ՄԵՐ ԿԱՆԹԵՂԸ

Մէկուկէս միւրիոն նահատակներու յի-
շատակը սարսուռով եւ հպարտութեամբ
կը լեցնէ մեր սրտերը:

Սարսուռով, երբ կը նկատենք ահաւոր
ու քստմեղի չարչարանքները, խոշտան-
դումները մեր խանդավառ մտաւորական-
ներուն, մեր հաւատարիմ մայրերուն ու
փախկաւորներուն կոյսերուն, մեր արեւակէզ ու
շինարար մշակներուն, երբ կը վերստին
անյիշելի տառապանքն ու հեծեծանքը մեր
ծծկեր մանկիկներուն եւ զոյգըմուն ծերե-
րուն, որոնք անդերեզման ինկան անապա-
տի աւազուկներն, կամ գետերու ժայռերն
ի վար զլորեցան, արդարութեան ծարա-
ւով:

Բայց այդ սարսուռը յուսահատական ա-
ղաղակ մը այժմ չէ որ կը խլէ մեր կուրծ-
քերէն, այլ հպարտութեան, արդար հը-
պարտութեան զգացումով մըն ալ կը հա-
մակէ մեր էութիւնը, ի տես մեր ժողո-
վուրդի աննկուն նկարագրին եւ անսասան
հաւատքին:

Անյիշատակ ժամանակներէ, մեր երկրին
կրանիտ ժայռերէն վաւեր մըն ալ ինչպէս
մեր հողիէն ներս: Արարատի պարիսպը կո-
ղերէն, Սասունի եւ Տուրքիոյ քարածա-
ղերէն ծնած են առիւծասիրտ մեր քաջե-
րը, որոնց զօրը խաչանիշ, ամպերուն վը-
րայ ոսկեծածան, դարերով փառքերն է
հիւսած մեր հայրենիքին: Դիւցազներ ի-

ջած են այդ բարձունքներէն ու մեր երկրին մէջ կանգնած յաղթական կամարներ, արուեստի շքեղ կոթողներ, հրաշագեղ երկնասլաց տաճարներ: Եւ հերոսներ հերոսներու ետեւէն, ոսկեղթայ պար են բռնած, մեր երկրին բարձրաբերձ լեռներուն նման, պաշտպանելու համար մեր հաւատքը, մեր ազատութիւնը, մեր ներկրական սրբութիւնները:

Ժողովուրդ մը, որ կը ծնի հերոսներ, որ կու տայ կրօնքի եւ հայրենիքի սիրոյն համար զոհուող նահատակներ, մեծ ժողովուրդ մըն է, մեծ՝ աւելի քան դանկերու այն բլուրները, զոր Տէր Զօրի դուրսի մէջ կարկառ առ կարկառ բարձրացողն ջարդարարները, մեծ՝ աւելի քան Արարտեան Մասիսը, ալեւոր վկան մեր դարաւոր պատմութեան: Մեծ ժողովուրդ մը, որովհետեւ այդ դանկերը կը քարոզեն նիւթապաշտ ու շահամոլ աշխարհի աչքին՝ թէ հայը ունի դադափառական մը, տենչը ազատութեան եւ արդարութեան, ունի հաւատքը անդենական կեանքի, քրիստոնէական լոյսով օծուն, որուն փարած կը մնայ ի դին իր կեանքին ու հայրենական սուրբ ակութիւն:

Եւրոպացի համբաւաւոր հեղինակ մը ըսած է՝ թէ հայը աւելի նահատակ ունի երկնքի մէջ, քան ապրող զաւակներ՝ այս երկրին վրայ, եւ ատիկա նկատած է մեծ պարծանքը հայ ժողովուրդին:

Մեր ժողովուրդին սիրելի բառերով, մենք պիտի ըսէինք թէ աւելի խաչքար ունինք՝ քան ապրող սերունդ: Եւ ամէն մէկ խաչքար խօսուն վկայութիւն մըն է. ամէն մէկ խաչքար երգ մը ունի, ազադակ մը, թէ հայը աշխուական ցեղի մը մնացորդն է, թէ հայը չէ հեռացած երբեք Աւարայրի հերոսներու հողիէն, Լուսաւորչի անխառն հաւատքէն:

Այդ ամբաղուռ հաւատքն էր որ դարձաւ կանթեղ մը լուսատու, սեւ անապատի խաւարին մէջ տրտմաթախիծ:

Երբեմն Աստուած լուսեղէն սիւնով եւ հրեղէն ամպով կ'առաջնորդէր անապատին մէջ իր ընտրեալ ժողովուրդը: Իսկ երկրորդ ելքին, Միջագետքի անապատին

մէջ չերեւցան այդպիսի հրաշալիքներ. որովհետեւ կար հաւատքի սուրբ կանթեղը, առաջնորդ բոլորին: Կոմիտասի «Տէր ողորմեա»ն կայծկլտուքն էր այդ կանթեղին, անմեղ կոյսերու արցունքը՝ իւզն այդ կանթեղին, որ երբեք չմարեցաւ:

1915 թուականի մէկուկէս միլիոն նահատակները ո'չ միայն աղգային զիւցաղներ են, հայրենիքի հերոսներ ու քաջեր, այլ նաեւ վկաններ, բառին հարապատ իմաստով. վկաններ ամէն դասակարգէ, որոնց մէջ իմաստասէր մտաւորականի կողքին՝ պարզուկ շինականն է կանգնած. վրկաններ՝ որ իրենց զիւցաղական մահով կու դան անդամ մըն ալ դաւանիլ Գրիտոսի աստուածութիւնը, սուրբ Աւետարանի պատգամներուն անսխալ վարդապետութիւնը: Հաղարաւոր եկեղեցականներ, իրենց հաւատացեալ հօտին հետ միասին, ամայի բացուածներու մէջ կամ դնդաններու խորը տառապալին, կու դան վկայութիւն մը տալու, հաստատելու մեր սուրբ հաւատքը: Այսպէս Հայն ու հայ Եկեղեցին կը բերէ իր գերագոյն տուրքը, Աստուծոյ եւ աշխարհի, քոսներորդ նիւթապաշտ դարու սեմին, վերապրելով հաւատքը նախնական եկեղեցւոյ:

Այս իմաստով, մահը՝ մեր նահատակներուն համար դարձաւ անմահութիւն. «մահ իմացեալ անմահութիւն», ինչպէս պատգամած է մեր աստուածախօսիկ Եղիշէն, Վարդաններու եւ Ղեւոնդներու օրերուն: Ճիշտ ինչպէս Քրիստոսի համար՝ մահը եղաւ աղբիւր եւ սկիզբ իսկական անմահութեան, յարութեան հրաշալիք:

Անմահութիւն՝ նախ իրենց համար. ո'չ այն իմաստով լոկ թէ անոնք կ'ապրին ու պիտի ապրին մեր յիշողութեան մէջ իրենց զիւցաղային օրինակով, այլ որովհետեւ Քրիստոսի նման անոնք երանական պատկերներու արժանացան իսկապէս, եւ աշխարհի կատարածին՝ վկաններու սեփական զափնեպսակով լուսեղէն՝ պիտի քալեն անմահ Գառին ետեւէն:

Անմահութիւն՝ նաեւ իրենց աղգալիցներուն համար: Նահատակներու արիւնը սերմն է նորանոր քրիստոնեաներու, ըս-

սած է եկեղեցական մեծ դրիչ մը, առաջին դարերուն: Մեր նահատակներու մահը դրաւականն է ո'չ միայն իրենց անմահութեան, այլ համայն մեր ժողովուրդի հաւաքական անմահութեան: Անտարակոյս կրնանք յայտարարել, որ եթէ այսօր հայ ժողովուրդին մէջ կ'ապրի հաւատքը, հաւաքակ բիւր խոչընդոտներու, եթէ այսօր՝ եւ չենք ուզեր յոռետես ըլլալ՝ հայ ժողովուրդը ինքնավստահութեամբ կը դիմէ դէպի իր լուսաւոր ապագան, կը մաքառի ներքին ու արտաքին դաւաճան ուժացումներու դէմ, եւ եռուն կեանք մը կը ծփայ դադուրէ դադուր հայ երիտասարդ կուրծքերուն տակ, մանաւանդ յիսնամեակի այս նուիրական օրերուն, այդ բոլորը արդիւնքն է հայ ժողովուրդի նահատակներուն. անոնց կեանքն է որ յարութիւն կ'առնէ մեր մէջ, անոնց հաւատքն է որ կը բողբոջի մեր սրտերուն մէջ: Այդքան զոհողութիւն մեր նահատակներուն՝ ամուլ չի կրնար մնալ. որովհետեւ, ըստ Աւետարանի խօսքերուն, ցորենի հատիկը երբ կ'իյնայ հողին մէջ ու կը մեռնի, անհամար արդիւնքներու աղբիւր կը դառնայ կենսառատ: Ժողովուրդ մը որ կը ծնի նահատակներ՝ չի մեռնիր առ յաւիտ, որովհետեւ անմահութեան դրաւականն ունի:

Անմահութիւն՝ նաեւ սուրբ հաւատքին համար: Քրիստոսի Եկեղեցին ամուր եւ անսասան հիմ ունի և դժուրի զօրութիւններն անգամ չեն կարող յաղթահարել զայն. բայց նահատակներու ամբիւծ աբիւնն է որ խառնուելով Քրիստոսի սուրբ լականոց ու պերճապայծառ կը դարձնէ մեր հաւատքին այս բարձր բերդը. նահատակներու արիւնն է որ անոր յաւերժական յաղթանակի բոմբիւնները կ'ապահովցնէ դարէ դար:

Ահա թէ ինչո՞ւ համար յիսնամեակը, զոր կը տօնենք, մեզի համար լոկ եղեռնի

ու սպանդի յիշատակութիւնը չէ. ջարդն ու կոտորածները յիսնամեակներով չեն փառարանուիր: Մեր յիսնամեակը՝ նահատակութեան յիսնամեակ է. եւ այս իմաստով՝ նուիրական եւ սուրբ տօն մը. մեր նահատակներու անմահութեան տօնը, մեր աղգային հաւաքական անմահութեան տօնը, մեր հաւատքին անմահութեան տօնը:

Յաղթանակի դիչերն է այս տօնական, ուր սայլ մը արիւնոտ, նահատակի սայլ մը յամբօրէն կը քալէ երկրէ երկիր. յաղթական դափնիներ կ'երկարին անոր ետեւէն, ինչպէս արշայոյսներ շողարձակ բուռ մը վարդ կը ցանեն նոյնիսկ օտարները, որ առիթը կ'ունենան հայ պատմութեան ամէնէն ողբերգական էջը կարդալու եւ յարգելու կը խոնարհին մարտիրոս ժողովուրդի մը յիշատակին առջեւ: Մինչ հայ ժողովուրդը անգամ մըն ալ կու դայ իր դաւանանքը հրապարակաւ յայտնելու, միացած ոյժերով, աներկիւղ եւ առանց որեւէ մարդկային ահաւանքի:

Կանթեղ մըն ալ ահա կը վառի: Կը վառի էջմիածնէն Անթիլիաս, Երուսաղէմէն Վենետիկ, Պէյրութէն մինչեւ հեռաւոր Ամերիկաները. այդ կանթեղը խորհրդանշին է մեր հաւատքին, մեր նահատակներու անմար հաւատքին: Կանթեղ մը՝ որ իր կայծկլտուն բոցով հէքեաթ չէ որ կը պատմէ եկեղեցւոյ որբերուն եւ մեր թողններուն, ոչ ալ ողբեր կը հիւսէ հառաչանքի, այլ կու դայ ջերմացնել բոլոր հայ սրտերը, լուսաւորել բոլոր հայ մտքերը, Հայրենիքի եւ Սիրիւքի մէջ, սիրոյ եւ միութեան նոր ծիածանի մը ներքեւ, անկեղծ խոստումով՝ հաւատարիմ որդիներն ըլլալու մեր անմահ նահատակներուն, հայ քրիստոնեայի անեղծ տարազով:

Այդ կանթեղը մեր ուխտն է ինքնին, Լուսաւորչի լուսածնունդ դաւաններուն լուսաւոր ուխտը եւ վկան մեր անշէջ հաւատքին: